Քաղվածք

Թթուջուր համայնքի ղեկավարի

հաշվետու ժողովի արձանագրությունից

2012թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ Թթուջուր համայնքի ղեկավար Ս.Ստեփանյանի հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակից Բ.Կռոյանը, Թթուջուր համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի բնակիչներից 52 հոգի:

Օրակարգ

1. 2011թ. կատարած աշխատանքների մասին հաշվետվություն
2. 2012թ. կատարվելիք աշխատանքների մասին

Թթուջուր համայնքի ղեկավար Ս.Ստեփանյանը ներկայարց 2011թ. իրականացրած աշխատանքների մասին: Նշեց, որ Թթուջուր համայնքի 2011թ. բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 100.9 %-ով. նախատեսված 3525.3 հազ.դրամից կատարվել է 3556.0 հազ.դրամ, մարվել է 900.0 հազ. դրամ աշխատավարձի և սոց. վճարի նախորդ տարիների պարտք: Իսկ կատարված աշխատանքներից նշեց, որ 2011թ. ընթացքում կառուցվել է Թթուջրի կամուրջը, որը փլուզվել էր գարնանային հորդառատ անձրևներից, կատարվել է դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների նորոգում, ջրագծի 1 կմ արտաքին ցանցի նորոգում, ներքին ջրագծի մաքրում և նորոգում, գյուղապետարանի շենքի մասնակի վերանորոգում, զոհվածների ընտանիքներին և սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 1300.0 հազ. դրամի դրամական օգնություն, կատարվել են մշակութային միջոցառումներ. մասնավորապես նշվել է մայիսի 9-ը, անկախության 20-ամյակը, ամանորը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ներկայացվեց 2012թ-ին իրականացվելիք աշխատանքների մասին: Նշվեց, որ կատարվելու է համայնքային գերեզմանատան ցանկապատում, գյուղապետարանի շենքի վերանորոգում, մանկապարտեզի շենքի վերանորոգում, ինչպես նաև գյուղոտեխնիկայի ձեռքբերում:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ Խ.Վերդյանը, Ա.Խաչատրյանը, որոնք հարց բարձրացրեցին գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ, նշեցին, որ գյուղտեխնիկայի, սերմացուի, պարարտանյութի բացակայության պատճառով մոտավորապես 580 հա վարելահող չի մշակվում:

Ժողովի մասնակիցները բավարար համարեցին համայնքի ղեկավարի 2011թ. կատարած աշխատանքները:

Ժողովի նախագահ Ս. Ստեփանյան

Քարտուղար Ն.Մացակյան